Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2023 թվականի մարտի 17-ի թիվ 31-Ա որոշման

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. 2022 թվականի ընթացքում Եղեգնաձոր համայնքի տարեկան աշխատանքային պլանում ընդգրկված ծրագրերից իրականացվել են հետևյալները.

| ՀՀ | Ծրագիրը | Ֆինանսավորման աղբյուրը և ծրագրի վրա ծախսված գումարը | Արդյունքը |
|---|---|---|---|
| 1 | Եղեգնաձոր համայնքի Միկոյան 5, Մոմիկի 2 և 6, Սպանդարյան 2 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ասֆալտապատում | Համայնքային և պետական բյուջե<br>74121262 ՀՀ դրամ | Բարեկարգվել է 4 բազմաբնակարան շենքի բակ: |
| 2 | Եղեգնաձոր համայնքի՝ Եղեգնաձոր բնակավայրի Միկոյան փողոցի 130մ, Նարեկացի փողոցի 80 մ, Շահումյան փողոցի 120մ, Վ. Գևորգյան փողոցի 210մ, Մոմիկի և Նարեկացի փողոցների խաչմերուկի 60մ մայթերի սալիկապատում գետի վրա գտնվող /Անդրանիկ փողոց/ կամուրջին կից նոր մայթի կառուցում | Համայնքային և պետական բյուջե<br>38840750 ՀՀ դրամ | Սալիկապատվել է 1821 քառ. մ. տարածք, որը ամբողջացնում է քաղաքի քաղաքաշինական ու ճարտարապետական տեսքը: |
| 3 | Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում 2-րդ փուլ | Համայնքային և պետական բյուջե<br>145260412 ՀՀ դրամ | Բարեկարգվել են Մալիշկա բնակավայրի ներհամայնքային ճանապարհները: |
| 4 | Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Գլաձորյան փողոցի 380մ հատվածի, Կամոյի փողոցի 2-րդ նրբանցքի 210մ, Մոմիկի փողոցի I-ին նրբանցքի 270 մ և Կոմիտաս փողոցների ասֆալտապատում | Համայնքային և պետական բյուջե<br>136968638 ՀՀ դրամ-2022 թ.<br>10417170 ՀՀ դրամ-2023 թ. | Ասֆալտապատվել են Եղեգնաձոր բնակավայրի 4 փողոցներ, որոնք էապես բարելավել են բնակավայրի արտաքին տեսքը և երթևեկության որակը: |
| 5 | Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր, | Համայնքային և պետական | Բարեկարգվել է 5 |

| | | | |
|---|---|---|---|
| | Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերի 44-օրյա պատերազմում նահատակված հայորդիների և Դ. Դեմիրճյանի անվան զբոսայգում գտնվող Արցախյան առաջին պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշահամալիրների կից տարածքների բարեկարգման աշխատանքներ | բյուջե<br><br>39153570 ՀՀ դրամ | հուշահամալիր, որի արդյունքում ամբողջացվել է դրանց արտաքին տեսքը: |
| 6 | Ֆոտովոլտային կայանների տեղադրում | Համայնքային բյուջե և դոնոր կազմակերպություններ<br><br>966000 ՀՀ դրամ | Կառուցվել է էլ. էներգիայի ստացման այլընտրանքային կայան: |
| 7 | Գլաձոր բնակավայրում ավտոպարկի և վարձակալական տարածքների կառուցում | Համայնքային բյուջե և Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)<br><br>24800400 ՀՀ դրամ | Գլաձոր բնակավայրում ստեղծվել է մեքենաների հավաքատեղի, որը վարձակալության տրվելու դեպքում կապահովի լրացուցիչ եկամուտ: |
| 8 | Եղեգնաձոր համայնքի՝ 1.Եղեգնաձոր բնակավայրի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | Համայնքային և պետական բյուջե<br><br>13897000ՀՀ դրամ | Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզը մասնակի վերանորոգվել է, և կառուցվել է ջեռուցման համակարգ, որի արդյունքում բարելավվել է նախադպրոցական երեխաներին մատուցվող ծառայությունների որակը: |
| 9 | Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի, Գլաձորյան, Հարավ-Արևմտյան թաղամասի, Թամանցիներ, Գետափ և Գլաձոր բնակավայրերի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի կառուցում | Համայնքային և պետական բյուջե<br><br>Վճարվել է 23736000 ՀՀ դրամ<br>Ենթակա է վճարման 28474000 ՀՀ դրամ | Կառուցվել է Եղեգնաձոր և Գետափ բնակավայրերի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցը: |
| 10 | Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում 1-ին փուլ | Համայնքային և պետական բյուջե<br><br>46246000 ՀՀ դրամ | Վերակառուցվել է խմելու ջրի ցանցը, ինչը հնարավորություն կտա անցնել 24 ժամյա անխափան ջրամատակարարման համակարգի: |

2. Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանում ընդգրկված ծրագրերից ընթացքի մեջ են և կավարտվեն 2023 թվականին հետևյալ ծրագիրը.

| ՀՀ | Ծրագիրը | Ֆինանսավորման աղբյուրը և ծրագրի ընդհանուր արժեքը |
|---|---|---|
| 1 | Եղեգնաձոր քաղաքի Նոր ավան թաղամասի կոյուղու ցանցի կառուցում | Համայնքային բյուջե և Տարածքային զարգացման հիմնադրամ<br><br>324216800 / *27929321 ՀՀ դրամ համայնքի ներդրում* |
| 2 | Կոմունալ տեխնիկայի ձեռքբերում, ավտոպարկի համալրում | Համայնքային բյուջե և դոնոր կազմակերպություններ<br><br>90000000 ՀՀ դրամ |

1. Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանում ընդգրկված, սակայն ֆինանսական բավարար միջոցներ չլինելու պատճառով չիրականացված ծրագրերն են.

| ՀՀ | Ծրագիրը | Ֆինանսավորման աղբյուրը և ծրագրի ընդհանուր արժեքը/ համայնքի մասնաբաժինը |
|---|---|---|
| 1 | Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի ներհամայնքային փողոցի ասֆալտապատում | Համայնքային և պետական բյուջե<br><br>262361000 / 144298550 ՀՀ դրամ |
| 2 | Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի մշակույթի տան մասնակի վերանորոգում | Համայնքային բյուջե<br><br>9162000 ՀՀ դրամ |
| 3 | Եղեգնաձոր բնակավայրի թիվ 2 և թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ների բակի բարեկարգման աշխատանքներ | Համայնքային և պետական բյուջե<br><br>36349140 / 10905100 ՀՀ դրամ |
| 4 | Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում 2-րդ փուլ | Համայնքային և պետական բյուջե<br><br>220559100 / 121307505 ՀՀ դրամ |
| 5 | Եղեգնաձոր բնակավայրի 1941-1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշահամալիրի կից տարածքի բարեկարգման աշխատանքներ | Համայնքային և պետական բյուջե<br><br>7552330 / 4532000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| 6 | Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Կամոյի, Չալաբյան, Ն. Մշեցու, Թամանցիներ, Չարենց, Բաղդասարյան, Օրբելի, Արսենյան նրբանցք, Վարդան Զորավար, Գագարին փողոցների լուսավորության ցանցի կառուցում | 111111370 / 50001000 ՀՀ դրամ |